

21.04.2011թ.

գ. Մադինա

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունվարի 21-ի թիվ 5-Ա կարգադրությունը հանձնաժողովը՝ նախագահությամբ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ի. Ասատրյանի, անդամությամբ՝ աշխատակազմի քարտուղարության պետ Յու. Թաթարյանի, աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետի տեղակալ Ա. Գասպարյանի, նույն վարչության ՀԳՄՍՍԳՀ բաժնի վարիչ Հ. Օհանյանի, աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի վարիչ Վ. Մնացականյանի, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Պողոսյանի, մասնակցությամբ մարզի Մադինա համայնքի ղեկավար /Վրեժ Սարգսյանի, աշխատում է 2008թ. հոկտեմբերի 30-ից/ և նրա աշխատակազմի վարչական վերահսկողության շրջանակներում ուսումնասիրեց համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի գործունեությունը 2009-2011թթ ընթացքում, ներքոհիշյալ բնագավառներում՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը իրավական ակտերի ընդունման բնագավառում

Համայնքի ավագանին 2009թ. գումարել է 11 նիստ, 2010թ. 9 նիստ, 2011թ. անցած ժամանակահատվածում՝ 1 նիստ:

Ընդամենը ընդունել է 57 որոշում:

Համայնքի ղեկավարը համապատասխանաբար ընդունել է որոշումներ՝

2009թ. – 10

2010թ. – 8

2011թ. – 3

Արձակել է կարգադրություններ՝

2009թ՝ 10-ը, 2010թ՝ 41-ը, 2011թ՝ 1-ը:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը արձակել է հրամաններ՝ 2009թ՝ 17, 2010թ.՝ 9, 2011թ. դեռ չի արձակել որևէ հրաման:

31.01.2009թ. թիվ 3 նիստում համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2009թ. բյուջեն:

Նույն նիստի թիվ 3 որոշմամբ հաստատվել են տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը: 28.03.2009թ. թիվ 5 նիստում ավագանին անդրադարձել է համայնքի ղեկավարի աշխատակազմի թափուր մնացած գլխավոր մասնագետի պաշտոնի պահելու նպատակահարմարության հարցը և որոշվել է դիմել պետական լիազորված մարմնին այդ պաշտոնը հանելու համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից: Նույն նիստի թիվ 3 որոշմամբ հաստատվել է համայնքի զարգացման 2009-2012թթ. ծրագիրը: 06.05.2009թ. թիվ 6 նիստը որոշում է կայացրել խնամակալության և հոգաբարձության խորհրդի կազմի մասին:

Նույն նիստի թիվ 3 որոշմամբ ավագանու անդամներ են առաջադրվել մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում:

20.06.2009թ. թիվ 8 նիստի որոշմամբ ավագանին հաստատել է համայնքի բյուջեում փոփոխություններ կատարելու հարցը:

Համայնքի բյուջեում փոփոխություն է կատարվել նաև 16.10.2009թ. թիվ 11 նիստի որոշմամբ: 11.12.2009թ թիվ 13 նիստում հաստատվել է համայնքի 2010թ. բյուջեն, տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողների հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը՝

- 1/ համայնքի ղեկավար – 1 միավոր -110.000 դրամ
- 2/ համայնքի ղեկավարի տեղակալ- 1միավոր 48.000 դրամ
- 3/ գյուղապետի օգնական – 1 միավոր - 36000 դրամ
- 4/ աշխատակազմի քարտուղար – 58000 դրամ
- 5/ առաջատար մասնագետ – 48000 դրամ
- 6/ առաջատար մասնագետ – 48000 դրամ
- 7/ առաջատար մասնագետ – 48000 դրամ
- 8/ տնտեսվար – 36000 դրամ
- 9/ պահակ – 36000 դրամ
- 10/ հավաքարար – 36000 դրամ
- 11/ մշակույթի տան տնօրեն – 42000 դրամ
- 12/ հաշվապահ – 36000 դրամ
- 13/ գրադարանավար – 36000 դրամ
- 14/ հավաքարար – 36000 դրամ

15.02.2010թ. թիվ 1 նիստում հաստատվել է համայնքի 2009թ. բյուջեի կատարողականը և համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերը:

22.03.2010թ. թիվ 2 նիստում ավագանին համաձայնություն է տվել համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակում վարորդի հաստիք ավելացնելու վերաբերյալ: Նույն նիստում փոփոխություն է կատարվել նաև համայնքի բյուջեում:

21.12.2010թ. թիվ 9 նիստում համայնքի ավագանին հաստատել է 2011թ. բյուջեն, տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը: Նույն նիստի 3-րդ որոշմամբ ավագանին հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ենթակայության կառույցների աշխատողների համայնքային ենթակայության կառույցների աշխատողների հաստիքացուցակը, դրույքաչափերը և թվաքանակը, համաձայն որի հաստատվել է ընդամենը՝ 15 միավոր հաստիք:

- 1/ համայնքի ղեկավար - 130000 դրամ
- 2/ համայնքի ղեկավարի տեղակալ – 48000 դրամ
- 3/ գյուղապետի օգնական – 39000 դրամ
- 4/ աշխատակազմի քարտուղար – 58000 դրամ
- 5/ առաջատար մասնագետ – 48000 դրամ
- 6/ առաջատար մասնագետ – 48000 դրամ
- 7/ առաջատար մասնագետ – 48000 դրամ
- 8/ վարորդ – 39000 դրամ
- 9/ տնտեսվար – 39000 դրամ
- 10/ պահակ – 39000 դրամ
- 11/ հավաքարար – 39000 դրամ

Մշակույթի կենտրոն

- 1/ տնօրեն – 42000 դրամ
- 2/ հաշվապահ – 39000 դրամ
- 3/ գրադարանավար – 39000 դրամ
- 4/ հավաքարար – 39000 դրամ

24.02.2011թ. թիվ 1 նիստում հաստատվել են՝

1/ համայնքի սեփականության տարեվերջյան գույքագրման արդյունքները

2/ 2010թ. բյուջեի կատարման հաշվետվությունը

3/ հաստատվել է նաև համայնքի զարգացման ծրագրի նորացված տարբերակը /այսինքն փոփոխություններ են կատարվել քառամյա զարգացման ծրագրում/:

Համայնքի ղեկավարի 7.05.2009թ. թիվ 7 որոշմամբ ստեղծվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:

07.05.2009թ. թիվ 8 որոշմամբ փոփոխություն է կատարվել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում /կապված ավագանու նոր անդամների հանձնաժողովներում ընդգրկելու հետ/:

8.05.2009թ. գյուղապետի թիվ 9 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի աշխատողների աշխատանքային կարգապահության ներքին կանոնները /համաձայն ՀՀ ՏԿՆ կոմիտեի տրամադրված օրինակելի կանոնակարգի/:

8.05.2009թ. թիվ 10 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը: 25.02.2010թ. գյուղապետի թիվ 15 որոշմամբ ստեղծվել է գնումների գործի պատասխանատու հանձնաժողով, իսկ 16.03.2010թ. թիվ 16 որոշմամբ ստեղծվել է ուսումնավարժական խումբ: 01.06.2010թ. թիվ 19 որոշմամբ ստեղծվել է քաղաքացիական պաշտպանության կազմավորում:

14.09.2010թ. թիվ 21 որոշմամբ փոփոխություն է կատարվել համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոններում: Համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ փոփոխություն չի կատարվել աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրի 7-րդ գլխի, 11-րդ կետի մեջ կապված զորահավաքի, վարժական հավաքների և զորակոչի կազմակերպման պարտավորությունների հետ: Համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի գրեթե բոլոր վերոշարադրյալ որոշումները և կարգադրությունները, որպես իրավական ակտեր, իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթներին: Իրավական ակտերի նախաբանում պահպանված չէ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթները, դրանք են՝ անհատական կամ լրկալ /ներքին/ ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում:

Իրավական ակտերում /որոշումներ և կարգադրություններ/ իրականացված փոփոխությունները և լրացումները չեն իրականացվել ՀՀ օրենքով սահմանված կարգով, այն է՝ չեն ղեկավարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով: Մադինա համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից 2009-2011թթ. ընդունված նորմատիվ իրավական ակտերը չեն ենթարկվել պետական իրավական փորձաքննության և պետական լիազորված մարմնի կողմից չեն ստացել պետական գրանցում, որով իսկ

չեն կատարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները: /Այդ նորմատիվ իրավական ակտերն են՝

- համայնքի բյուջեն
- բյուջեում կատարվող փոփոխությունները
- աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը.
- տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը
- ավագանու կանոնակարգը
- համայնքի զարգացման ծրագիրը
- համայնքի բյուջեի տարեկան հաշվետվությունը
- գույքի օտարման կամ օգտագործման տրամադրելու մասին
- առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները/:

Պետք է նշել, որ համայնքում դեռևս մշակված, հաստատված և գործողության մեջ չի դրվել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները, որով իսկ չեն կատարվել ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16-րդ հոդվածի 17-րդ կետի և 40-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

2. Համայնքային ծառայության և գործավարության բնագավառներ

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 205-Ա հրամանով հաստատվել է Մադինա համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը համաձայն, որի հաստատվել են հետևյալ պաշտոնները.

- 1/ աշխատակազմի քարտուղար - /2.1-1/
- 2/ աշխատակազմի գլխավոր մասնագետ - /2.3-1/
- 3/ առաջատար մասնագետ - /3.1-1/
- 4/ առաջատար մասնագետ - /3.1-2/

2007թ. հունվարին համայնքի ղեկավարի կողմից հաստատվել են համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը և համայնքային ծառայողները նշանակվել են համապատասխան պաշտոններում:

08.04.2009թ. գյուղապետի թիվ 5 որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատվել է աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը, իսկ թիվ 6 որոշմամբ մյուս համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը /հիմք է ընդունվել ՀՀ ՏԿՆ 2009թ. հունվարի 20-ի թիվ 37-Ա հարամը/: Մինչ այդ 01.12.2008թ. աշխատակազմի նախկին քարտուղարը իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից, նույն օրը գյուղապետի թիվ 8 կարգադրությամբ Ա. Սարոյանը նշանակվել է աշխատակազմի քարտուղարի պաշտոնում և նրա հետ կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև մրցույթի անցկացումը:

01.12.2008թ. թիվ 9 կարգադրությամբ աշխատանքից ազատվել է հաշվապահը /պետք է լիներ առաջատար մասնագետ, քանզի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում նման պաշտոն չկա/, նույն կերպ ոչ ճիշտ իրավական ակտ է ընդունվել 01.12.2008թ. /թիվ 11 կարգադրությունը/, համայնքային

ծառայության առաջատար պաշտոնի աշխատանքի է ընդունվել /օպերատոր/ քաղաքացի, որի հետ նույնպես կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև մրցույթի անցկացումը:

01.02.2009թ. թիվ 13 և թիվ 14 կարգադրություններով համայնքի ղեկավարը աշխատակազմի քարտուղարի և /առաջատար մասնագետի/ օպերատորի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրերը նորից ներկայացվել են մինչև մրցույթի անցկացումը:

02.02.2009թ. թիվ 16 կարգադրությամբ քաղաքացի Զորիկ Խաչատրյանը ընդունվել է աշխատանքի առաջատար մասնագետի /3.1-3/ փոխարեն, որպես հարկահավաք և նրա հետ կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր: 01.04.2009թ. թիվ 17 կարգադրությամբ համայնքի ղեկավարը երկարացրել է աշխատակազմի քարտուղարի ժամկետային աշխատանքային պայմանագիրը: Փաստորեն չեն կատարվել <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, այն է՝ համայնքային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում այդ պաշտոնն զբաղեցվում է մրցույթով, որի համար տրվում է համապատասխան հայտարարություն:

27.07.2009թ. թիվ 19 կարգադրությամբ լուծվել է աշխատակազմի քարտուղարի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը. իսկ նույն օրը թիվ 20 կարգադրությամբ հիմք ընդունելով 27.07.2009թ. համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի եզրակացությունը /6 ամիս փորձաշրջանով/ աշխատակազմի քարտուղար է նշանակվել մրցույթում հաղթած Ա. Սարոյանը և փորձաշրջանն ավարտելուց հետո սահմանված ժամկետում՝ 29.01.2010թ. թիվ 24 կարգադրությամբ քարտուղարին շնորհվել է ՀՀ համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 01.04.2009թ. թիվ 3 և թիվ 4 հրամաններով ժամկետային աշխատանքային պայմանագրեր են կնքվել աշխատակազմի առաջատար մասնագետների /ծածկագրեր՝ 3.1-3, 3.1-2/ թափուր պաշտոնների տեղերը զբաղեցնելու համար /մինչև մրցույթի անցկացումը/:

27.06.2009թ. թիվ 7 և թիվ 8 հրամաններով, հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի եզրակացությունը առաջատար մասնագետներ են նշանակվել /ծածկագիր՝ 3.1-3 և 3.1-2/ մրցույթում հաղթող ճանաչված անձինք: Հետագայում առաջատար պաշտոնի /ծածկագիր՝ 3.1-2/ նշանակված մասնագետը իր դիմումի համաձայն ազատվել է պաշտոնից, նրա փոխարեն 17.09.2009թ. թիվ 16 հրամանով պաշտոնի է նշանակվել Քրիստինե Սաֆարյանը՝ 6 ամիս փորձաշրջանով, նույն օրը թիվ 17 հրամանով, հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի եզրակացությունը առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-1/ պաշտոնում կատարվել է նշանակում: Փորձաշրջանի ավարտից հետո 29.03.2010թ. թիվ 1 և թիվ 2 հրամաններով դասային աստիճաններ են շնորհվել 2 առաջատար մասնագետների /ծածկագիր՝ 3.1-2, 3.1-1/:

Համայնքային ծառայության մրցույթներ են տեղի ունեցել 24.07.2009թ. 2 առաջատար պաշտոնների թափուր տեղերի համար /ծածկագիր՝ 3.1-3 և 3.1-2/ և աշխատակազմի քարտուղարի պաշտոնի համար /ծածկագիր՝ 1.2-1/: Պաշտոնի նշանակվելուց հետո առաջատար մասնագետներից մեկը /կող՝ 3.1-2/ դիմումի համաձայն թողել է պաշտոնը: Նույն առաջատար մասնագետի 3.1-2 և մյուս՝

առաջատար մասնագետի /3.1-1/ թափուր պաշտոնների համար մրցույթ է կայացել 15.09.2009թ.:

Ուսումնասիրությունից պարզվեց, որ համայնքային ծառայության կադրային գործերը վարվում են ՀՀ ՏԿՆ 2006թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի: Այս հարցում որոշ թերություններ հանձնարարվեց շտկելու կարճ ժամկետում:

Գործավարության ուսումնասիրությունից պարզվեց, որ առկա են քաղաքացիներից ստացված դիմումների մատյանները, ինչպես նաև վերադաս և այլ կազմակերպություններից ստացվող գրությունների և թղթակցությունների մուտքի մատյանը և գյուղապետարանից ելքագրված գրությունների մատյանները և փաստաթղթերը, ըստ թղթապանակների: Այսպես՝ քաղաքացիներից ստացվել են դիմումներ՝

2009թ. – 22

2010թ. – 10

2011թ. անցած ժամանակահատվածում 1-ը:

Մուտքագրվել են գրություններ՝

2009թ. – 23

2010թ. – 57

2011թ. – 28

Գյուղապետարանից ելքագրվել են գրություններ և պատասխաններ՝

2009թ. – 29

2010թ. – 37

2011թ. – 22

3. Համայնքի սոցիալ-տնտեսական կառուցվածքը և ենթակառուցյունները

Համայնքի սեփականության ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 1997թ. թիվ 51 որոշմամբ, որի մեջ հիմնականում մտնում են

1/ մշակույթի տուն

2/ հացահատիկի պահեստ

3/ խտացրած կերերի պահեստ

4/ խմելու ջրի ներհամայնքային ջրագիծ

5/ գազամատակարարման համակարգ

6/ ոռոգման ցանց

7/ ներհամայնքային ճանապարհներ

և 2010թ. ձեռք բերված ՎԱԶ-21-21 մակնիշի ավտոմեքենա:

Մադինա գյուղը վերաբնակեցվել է 1921-1922թթ.: Բնակիչները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառից: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 2227 մ բարձրության վրա:

Համայնքն ունի 1162 բնակիչ, որոնցից տղամարդիկ՝ 628 հոգի, կանայք՝ 534:

Մշտապես ներկա են 1134-ը ժամանակավոր բացակա են 28-ը:

Համայնքն ունի 343 տնտեսություն, այդ թվում առկա՝ 338-ը: Բնակչության ընդհանուր թվից աշխատունակներ են 720-ը, թոշակառուներ՝ 130-ը: <<Փարոս>> ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված են 90-ը: Համայնքում կան 180

առանձնատներ՝ 31000 քմ տարածքով: Համայնքի բնակիչներն ունեն 1161 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որոնցից կովեր՝ 405, 1453 գլուխ ոչխարներ, 2207 թև թռչուններ, 52 մեղվաընտանիքներ, 9 գլուխ խոզեր:

Համայնքում ՀՈԱԿ-ներ չկան: Համայնքի ենթակառուցվածքներից է մշակույթի տունը, որի հաստիքացուցակով նախատեսված են տնօրենի, հաշվապահի, գրադարանավարի և հավաքարի հաստիքներ:

Գյուղապետարանի աշխատակազմը տեղավորված է 2007-2008թթ. կապիտալ վերանորոգված մշակույթի տան 2-րդ հարկում և ունի աշխատանքների կազմակերպման բավարար պայմաններ: Աշխատակազմն ունի 3 համակարգիչներ:

Բնակչության խմելու ջրի պահանջը բավարարելու նպատակով գիշերը ջրավազաններից եկող ջուրը փակվում է, ցերեկային ժամերին՝ բացվում: Շուրջ 1կմ երկարությամբ հատվածում ջրատար խողովակները պետք է փոխարինվեն նորով, այլապես անձրևաջրերը, կեղտաջրերը հաճախ ներթափանցում են ջրի ցանց:

Խմելու ջրի շուրջ 4 կմ երկարությամբ ցանցը լիովին վթարային վիճակում է և կարիք ունի հիմնանորոգման:

Համայնքի բնակիչների ոռոգման ջուրը վերցրվում է <<Գոլովնյակ>> կոչվող տարածքից, 1950-ական թվականներին կառուցված ջրանցքով, որը քայքայվել և շարքից դուրս է եկել: Այստեղ նույնպես ջրի կորուստը շատ մեծ է: 2010թ. ՋՕԸ միջոցով վերանորոգվել է ջրատարի սկզբնամասի մոտ 1 կմ հատվածը, սակայն ջրի քանակությունը շարունակվում է չբավարարել բնակչության պահանջը:

Աղբահանությունը 2010-2011թթ. կատարվում է աղբատար մեքենայի միջոցով, ամսական 2-անգամյա գրաֆիկով: Այդ նպատակով գյուղապետարանը պայմանագիր է կնքել ֆիզիկական անձի՝ համայնքի բնակիչ Զավեն Ճոհկյանի հետ, որն իր անձնական <<ԶԻԼ>> մակնիշի ավտոմեքենայով աղբը թաղամասերից հավաքում է և տեղափոխում աղբավայրը /պայմանագիր -10/12, 01.10.2010թ./: Պայմանագրով նախատեսված աշխատանքների արժեքը կազմում է 200.0 դրամ, որը փոխանցվում է ՎՏԲ Հայաստանյան բանկի թիվ 16027100000400 հաշվին:

Գյուղը շրջկենտրոնից գտնվում է 14 կմ հեռավորության վրա, ճանապարհը խիստ անբարեկարգ է, ձմռանը ձյունաբքերի պատճառով հաճախակի փակվում է և կարիք ունի ասֆալտապատման: Բնակչությունը շրջկենտրոնի հետ կապված է օրական 2 անգամ գրաֆիկով գործող ավտոբուսային երթևեկությամբ:

Ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 5 կմ: Ուսումնասիրվող ժամանակամիջոցում կատարվել են փոսայցման, բարեկարգման աշխատանքներ, որոնց վրա համայնքի բյուջեից 2009թ. ծախսվել է 400.0, 2010թ.՝ 717.0:

Գյուղապետարանի կողմից որոշակի աշխատանք է կատարվել փողոցային լուսավորության շուրջ 1.6 կմ ընդհանուր երկարությամբ ցանցի անցկացման ուղղությամբ: Այդ նպատակով 2010թ. տնկվել են 30 հենասյուններ, ընթացիկ տարում՝ ևս 40 հենասյուններ, որոնք իրականացվում են համայնքի բյուջեի միջոցներով: Այդ նպատակով ավագանու որոշմամբ 2010թ. հատկացվել է 2.1 մլն, 2011թ. 1 մլն դրամ գումար: Մինչև տարեվերջ համայնքը կունենա գործող փողոցային լուսավորության ցանց:

Գյուղում կենցաղսպասարկման ծառայություններ չկան: Գործում է երեք խանութ՝ 3 աշխատակիցներով:

Համայնքում կա բուժկետ, որը գտնվում է մշակույթի տանը, լիովին վերանորոգված և կահավորված է: Վերանորոգումը կատարվել է «Հագարամյակի մարտահրավերներ» ծրագրով: Ունի 2 բուժքույր:

Բուժկետը սպասարկվում է Վ. Գետաշենի ԱՊԿ-ի կողմից: Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց, որը կարիք ունի վերանորոգման: Դպրոցն ունի 32 մանկավարժ, 222 աշակերտ:

Գյուղն ունի 1 անասնաբույժ, որը վարձատրվում է ՀՀ գյուղնախարարության կողմից, պետպատվերի շրջանակներում: Ձեռնարկված կանխարգելիչ բուժամիջոցառումների շնորհիվ համայնքի բնակչության անասունների շրջանում համաճարակների դեպքեր չեն արձանագրվել:

Համայնքն ունի երկհարկանի, 2007թ. կապիտալ վերանորոգված մշակույթի տուն: Տնօրենն է Վահան Նազոյանը, բարձրագույն կրթությամբ, տնօրենի պաշտոնում աշխատում է 1972 թվականից: Մշակույթի տունն ունի 300 տեղանոց կահավորված դահլիճ, խաղասենյակ: Գործող խմբակներ առայժմ չկան:

Համայնքի բյուջեով 2011թ. նախատեսված է 700 հազ. դրամ հատկացնել համակարգչի և գույքի ձեռքբերման համար: Մշակույթի տունն ունի աշխատանքային պլաններ, այլ փաստաթղթեր:

Մշակույթի տանը գտնվում է գրադարանը /վարիչ Գագիկ Մնոյան, միջնակարգ-մասնագիտական կրթությամբ, նշված պաշտոնում աշխատում է 1995 թվականից/:

Գրադարանն ունի 5685 կտոր գիրք, շուրջ 500 ընթերցող:

Գրքերը պահվում են առանձին պահոցում, կա գրադարանավարների կարիք: Վերջին անգամ գրադարանը գրքեր ստացել է 2006թ. 18 կտոր, Գավառի մարզային գրադարանից:

Համայնքում ուսումնասիրվող ժամանակամիջոցում ծրագրեր չեն իրականացվել: Գյուղատնտեսության և անասնապահության զարգացման նպատակով ընթացիկ տարում համայնքը ներգրավվել է ՀՀ գյուղնախարարության ծրագրով իրականացվող ջրարբիացման և անասնապահության զարգացման գործընթացում:

2009թ. համայնքի բյուջեի միջոցներով ցանկապատվել է գյուղի գերեզմանոցը: Ընթացիկ տարում նախատեսվում է նաև գերեզմանոցի տարածքում կառուցել շուրջ 500 մ երկարությամբ ջրագիծ:

2010թ. բարեկարգվել և վերանորոգվել է մշակույթի տան առջև գտնվող Հայրենական մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակին նվիրված հուշարձանն ու նրա հարակից տարածքը:

Գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար գյուղի բնակիչներն ունեն 1 կոմբայն, շուրջ 30 միավոր անիվավոր և թրթուռավոր տրակտորներ, գյուղգործիքներ:

4. Համայնքի ղեկավարի գործունեությունը հողաշինարարության և հողօգտագործման բնագավառում

Մադինա համայնքն համայնքի վարչական սահմանների ներսում ունի համայնքային սեփականություն հանդիսացող 1082.5 հա գյուղատնտեսական հողատեսքեր, որից վարելահող 89.8 հա, արոտ 365.0 հա, այլ հողեր 627.7 հա:

Համայնքային սեփականություն հանդիսացող 89.8 հավարելահողերից օգտագործվում է 50.0 հա տարածք, որի վարձավճարի չափը կազմում է 160.0 հազար դրամ, սակայն նշված տարածքների համար 2009-2010թթ. համար չի տրվել հայտարարություն և չի կնքվել օրենքով սահմանված կարգով պայմանագրեր, հողամասերը օգտագործվում են ցուցակային կարգով 196 քաղաքացու կողմից: Պայմանագիր չի կնքվել նաև 365.0 հա արոտների համար, որի վարձավճարի չափը կազմում է 662.5 հազար դրամ, վարձավճարը գանձվում է ըստ անասնազխաքանակի:

2010թ. մարտի 5-ին <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթով տրվել է հայտարարություն 0.2 հա գյուղատնտեսական հողատեսքի օտարման վերաբերյալ: Աճուրդին մասնակցելու համար հայտ է ներկայացրել 2 քաղաքացի աճուրդային կարգով: Աճուրդային կարգով օտարվել է 0.2 հա արոտ 4-րդ կարգի, որի կադաստրային արժեքը կազմել է 27500 դրամ, օտարման արժեքը կազմել է 30250 դրամ:

2009թ. հողի վարձավճար է նախատեսվել 1978.2 հազար դրամ, գանձվել է 1265.0 կամ 64.1%: Հողի հարկ է նախատեսվել 3556.9 հազար դրամ:

2010թ. հողի վարձավճար է նախատեսվել 1408.2 հազար դրամ, գանձվել է 1650.0 հազար դրամ կամ 117.2%:

2011թ. ապրիլի 20-ի դրությամբ նույնպես չի տրվել հայտարարություն գյուղատնտեսական հողատեսքերի համար և չի կնքվել համապատասխան պայմանագրեր:

2011թ. հողի վարձավճար է նախատեսվել 1011.2 հազար դրամ, գանձվել է 47.0 հազար դրամ կամ 4.6%:

Ուսումնասիրության պահին հողի վարձավճար է գանձվել 93200 դրամ, որից 47900 դրամ վարելահողերի վարձավճար, իսկ 45300 դրամ արոտի վարձավճար:

5. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում

Մադինա համայնքում, ի տարբերություն նախորդ 2005-2008թթ. երբ սեփական եկամուտների կատարողականը ապահովվել է 21.8-ից 34.4%-ի շրջանակներում, և շարունակաբար զիջել է մարզի համապատասխան միջին ցուցանիշը, 2009-2010թթ. արձանագրվել է զգալի առաջընթաց, 2009թ. կազմելով 86.5 և 2010թ.՝ 106.7%: Այդ մակարդակն ապահովվել է հիմնականում հողի հարկի և հողերի վարձավճարների մուտքերի հաշվին, որի արդյունքում զգալիորեն նվազել են այդ հարկատեսակների գծով նախորդ տարիների ընթացում առաջացած ապառքները և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը: Դրական տեղաշարժ է արձանագրվել համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին որոշ խնդիրներ լուծելու գործում:

Բերենք 2009-2010թթ. և 2011թ. 1-ին եռամսյակի համայնքի բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվական տվյալները.

Եկամուտները	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի առ1.04.11թ.	%
Հողի հարկ	3556.9	3655.0	103.0	3685.1	4175.4	113.3	3085.8	649.0	21.0
Գույքահարկ	483.7	432.3	89.0	698.7	545.2	78.1	567.7	54.0	9.5
Տեղական տուրքեր	210.0	20.0	10.0	250.0	50.0	20.0	260.0	-	-
Հողի վարձավճար	1978.2	1265.0	64.1	1408.2	1650.0	117.2	1011.2	47.0	4.6
Այլ եկամուտներ	-	-	-	-	13.0	-	-	-	-
Ընդ. սեփ. եկամուտներ	6228.8	5385.8	86.5	6042.0	6443.8	106.7	4924.7	750.0	15.2
Պատ. լիազորութ.	729.6	729.6	100.0	600.0	600.0	100.0	600.0	-	-
Դոտացիա	11566.4	11566.4	100.0	14009.5	14009.5	100.0	12964.4	3241.1	25.0
Ընդամենը եկամուտներ	18524.8	17681.4	95.4	20651.5	21043.3	101.9	18489.1	3991.1	21.6

Համաձայն ներկայացված հաշվետվությունների, համայնքի 2009թ. ճշտված բյուջեով եկամուտներ է նախատեսվել 18524.8 հ/դրամ, փաստացի տարվա ընթացքում հավաքագրվել է 17681.4 հ/դրամ, կամ պլանը կատարվել է 95.4%-ով, այդ թվում՝ սեփական եկամուտները 6228.8 հ/դրամ պլանի դիմաց կազմել են 5385.8 հ/դրամ, կամ կատարվել 86.5%-ով: Ընդ որում, փաստացի սեփական եկամուտները ընդամենը եկամուտներում կազմել են 30.5%, որը բարձր է մարզի միջին ցուցանիշից: Բյուջեով նախատեսված 20184.8 հ/դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 14897.0 հ/դրամ կամ փաստացի ծախսերը կատարվել են 73.8%-ով: Աշխատավարձի և սոցվճարի հոդվածներով կատարված փաստացի ծախսերը ընդամենը փաստացի ծախսերում կազմել են 73.8%: Տնտեսագիտական դասակարգման մնացած հոդվածներով ծախսերը կազմել են ընդամենը 3945.5 հ/դրամ, այդ թվում՝ յուրաքանչյուր հոդվածով 33.0-ից 1200.0 հ/դրամ: Այսպես, 4216 <<Գույք և սարքավորումների վարձակալություն>> հոդվածով, տրանսպորտի վարձակալության ծախսը 2009թ. կազմել է 660.0 հ/դրամ: 2.02.2009թ. թիվ 10/3 պայմանագրով, Մադինայի բնակիչ Գ. Մալխասյանը իր սեփական տրանսպորտային միջոցը տրամադրել է գյուղապետարանին ծառայողական նպատակով, ամսական 60.0 հ/դրամ վարձավճարով: 2009թ. 11 ամիսների և 2010թ. 2 ամիսների /համաձայն 11.01.2010թ. թիվ 10/1 պայմանագրի/ համար քաղաքացուն վճարվել է 660.0 և 120.0 հազար դրամ, ընդամենը 780.0 հ/դրամ /10% եկամտահարկը հանած/: 702.0 հ/դրամը փոխանցվել է քաղաքացու անունով պետքանկում բացված հատուկ հաշվին: Վճարումների վերաբերյալ կան զանձապետական համապատասխան փաստաթղթեր:

4251 <<Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգումներ>> հոդվածով 2009թ. կատարվել են 1200.0 հ/դրամ փաստացի ծախսեր, այդ թվում՝

ա/ 29.06.2009թ. թիվ 10/7 պայմանագրի և այլ փաստաթղթերի համաձայն համայնքի մշակույթի կենտրոնի ցանկապատի նորոգման նպատակով ծախսը կազմել է 450.0 հ/դրամ.

բ/ 1.07.2009թ. թիվ 10/10 պայմանագրի և այլ փաստաթղթերի համաձայն ներհամայնքային ճանապարհների փոսայցման նպատակով ծախսը կազմել է 400.0 հ/դրամ.

զ/ 15.11.2009թ. թիվ 10/13 պայմանագրի և այլ փաստաթղթերի համաձայն խմելու ջրագծի ընթացիկ նորոգման նպատակով ծախսը կազմել է 350.0 հ/դրամ:

4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հողվածով, սակավ ապահովված ընտանիքներին, ավագանու տարբեր որոշումներով, տրվել են ֆինանսական օգնություններ. 2009թ.՝ 1000.0 հ/դրամ, 2010թ.՝ 1000.0 հ/դրամ և 2011թ. 1-ին եռամսյակում՝ 110.0 հ/դրամ:

Համայնքի 2010թ. ճշտված բյուջեով եկամուտներ է նախատեսվել 20651.5 հ/դրամ, փաստացի տարվա ընթացքում հավաքվել է 21043.3 հ/դրամ կամ պլանը կատարվել է 101.9%-ով, այդ թվում՝ սեփական եկամուտները 6042.0 հ/դրամ պլանի դիմաց կազմել են 6443.8 հ/դրամ, կամ կատարվել է 106.7%-ով: Ընդ որում, փաստացի սեփական եկամուտները ընդամենը եկամուտներում կազմել են 30.6%, որը դարձյալ բարձր է մարզի միջին ցուցանիշից /25.8%/: Բյուջեով նախատեսված 20651.5 հ/դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 19218.2 հ/դրամ, կամ փաստացի ծախսերը կատարվել են 93.1%-ով: Աշխատավարձի և սոցվճարի հողվածներով կատարված փաստացի ծախսերը ընդամենը փաստացի ծախսերում կազմել են 57.1%: Տնտեսագիտական մնացած հողվածներով ծախսերը կազմել են 8239.3 հ/դրամ, այդ թվում՝ յուրաքանչյուր հողվածով 40.0-ից 1917.0 հ/դրամ: Այսպես, 4251 <<շենքերի և շինությունների ընթացիկ նորոգումներ>> հողվածով 2010թ. փաստացի ծախսվել է 1917.0 հ/դրամ, այդ թվում՝

ա/ 16.11.2010թ. թիվ 10/15 պայմանագրի համաձայն, կնքված ֆիզիկական անձ Սերյան Ճոկյանի հետ, համայնքի <<Ջրովի>> և <<Համալիր>> կոչվող տարածքում ոռոգման առուների խողովակների տեղադրման համար /որի նախագծումը կատարել է „Աամ-6,, ՍՊԸ և նրան վճարվել 25.0 հ/դրամ/ ծախսը կազմել է 700.0 հ/դրամ /ներառյալ 10% եկամտահարկը, 67.5 հ/դրամ գումարով/.

բ/ 26.10.2010թ. թիվ 10/13 պայմանագրի համաձայն, խմելու ջրագծի ընթացիկ նորոգման նպատակով, <<Սամվել և Գեղամ>> ՍՊԸ-ից ձեռք է բերվել 600 գծմ մետաղեպլաստ խողովակներ, ~~300.0 հ/դրամ~~ գումարով /28.10.2010թ. թիվ 41 հաշիվ ապարանքագրով/, որոնք տեղադրվել են համայնքի բնակիչների ուժերով.

գ/ 2.07.2010թ. թիվ 10/8 պայմանագրով, կնքված ֆիզիկական անձ Շ. Նազոյանի, հետ կատարվել է ներհամայնքային ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ, որի ~~համար ծախսերը~~ կազմել է 717.0 հ/դրամ: Այս նև վերը թվարկված գնումները համայնքում իրականացվել են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի խախտումներով:

4264 <<տրանսպորտային նյութեր>> հողվածով, 2010թ. կատարվել են 600.0, հ/դրամ փաստացի ծախսեր, որով 2010թ. մարտի 1-ին գնված <<ՎԱԶ-21214>>. մակնիշի /Նիվա/ ծառայողական մեքենայի համար ձեռք է բերվել բենզին:

2011թ. 1-ին եռամսյակում սեփական եկամուտները կատարվել են 15.2%-ով, մարզի 18.4% միջինի դիմաց, և աշխատակազմը լուրջ աշխատանք պետք է տանի, հետագայում, բոլոր հարկատեսակների գծով պլանային մուտքերն ապահովելու համար: Բյուջեով նախատեսված 18489.1 հ/դրամ պլանի դիմաց 2011թ. 1-ին եռամսյակում ծախսերը կազմել են 2035.7 հազար դրամ, որոնք հիմնականում ուղղվել են աշխատավարձի և սոցվճարի հողվածներով ծախսերի կատարմանը:

Ֆոնդային բյուջեի միջոցներից 2009թ. կատարվել են 660.0 հ/դրամի, 2010թ.՝ 5447.0 հ/դրամ ծախսեր, իսկ 2011թ. 1-ին եռամսյակում ծախսեր չեն կատարվել: Ընդ որում, 5122 <<Վարչական սարքավորումներ>> հողվածով 2009թ, համաձայն

30.11.2009թ. թիվ 10/14 պայմանագրի, <<Արտյոն Նիկոյան>> Ա/Ձ-ից ձեռք են բերվել 2 հատ համակարգիչներ 416.7 հազար դրամ և 1 հատ տպիչ 62.5 հազար դրամ արժեքով, 20% ԱԱՀ-ի հետ միասին՝ 575.0 հ/դրամ գումարով /30.11.2009թ. թիվ 5 հաշվ-ապարանքագրով/, որոնք գույքամատյանում գրացված էին:

5122 <<Շենքերի և շինությունների կառուցում>> հողվածում կատարվել են 2200.0 հ/դրամ ծախսեր, որոնք ուղղվել են համայնքի փողոցային լուսավորության ցանցի կառուցմանը: <<Գեղամա աշխարհ>> թերթի 23.04.2010թ. թիվ 10 համարում կա հայտարարություն, գնանշման հարցման ձևով գնում կատարելու մասին: Մրցույթին մասնակցել է 3 մասնակից, հաղթող է ճանաչվել <<Աֆամիա>> ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է 7.05.2010թ. թիվ 10/5 պայմանագիրը: 31.05.2010թ. կազմված շինաշխատանքների կատարման և ընդունման ակտի և գանձապետական համապատասխան փաստաթղթերի համաձայն, կատարողական ակտի արժեքը կազմել է 2200.0 հ/դրամ /կատարողական ակտը կցվում է/: Կա նաև <<Արամ-6>> ՍՊԸ-ի կողմից կազմված նախահաշվային փաստաթղթեր /նախահաշվի արժեքը 2989.1 հ/դրամ է/, որին վճարվել է 50.0 հ/դրամ:

5122 <<Վարչական սարքավորումներ>> հողվածով, համաձայն 10.09.2010թ. թիվ 10/10 պայմանագրի, 15.09-2010թ. հաշիվ ապրաքագրի և գյուղապետական փաստաթղթերի, <<Հայկ Հովհաննիսյան>> Ա/Ձ-ից ձեռք է բերվել համակարգիչ 1 հատ 220.0 հ/դրամ և տպիչ 77.0 հ/դրամ, ընդամենը 297.0 հ/դրամ գումարով սարքավորումներ, որոնք գույքամատյանում գրանցված էին:

5121 <<տրանսպերտային սարքավորումներ>> հողվածով փաստացի ծախսը կազմել է 2900.0 հ/դրամ: <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթի 16.02.2010թ. թիվ 26 համարում կա հայտարարություն գնանշման հարցում կատարելու միջոցով ծառայողական BA3-21214 մակնիշի /նիվա/ ավտոմեքենա գնելու մասին, որին ներկայացվել է 2 հայտ: 1.03.2010թ. կնքված թիվ 10/4 պայմանագրի և համապատասխան գանձապետական փաստաթղթերի համաձայն, Երևան քաղաքի բնակիչ Համբարձում Պարսամյանից, 2900.0 հ/դրամ /ներառյալ 10% եկամտահարկը/ գումարով ձեռք է բերվել 2005թ. արտադրության ՎԱՁ-21214 մակնիշի /նիվա/ ավտոմեքենա, վաճառողին փոխանցելով 2610.0 հ/դրամ /1.03.2010թ. թիվ 11 փոխանցագիր/ և պետբյուջե որպես եկամտահարկ՝ 290.0 հ/դրամ /1.03.2010թ. թիվ 12 փոխանցագիր/:

Հողի հարկի բազան համայնք է փոխադրվել 2007թ. աշնանը և 2008թ. հունվարի 1-ի դրությամբ առկա է եղել 6781.9 հ/դրամ ապառքներ և 3391.1 հ/դրամ տույժեր /երկուսը միասին՝ 10073.0 հ/դրամ/: Հողի հարկի տարեկան հաշվարկային գումարը կազմում է 2304.3 հ/դրամ: Վարչական բյուջեում հողի հարկի գծով նախատեսված գումարներում ներառված են նաև նախորդ տարիների ապառքները, ըստ ժամանակացույցի: <<Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին>> ՀՀ օրենքով 86 հարկ վճարողների տրվել է 635.7 հազար դրամի արտոնություն: Առ 1.04.2011թ. դրությամբ այդ հարկատեսակի գծով ապառքները նվազել և կազմել են 7031.0 հ/դրամ /հողի հարկի գծով 2247.3 և տույժերը 4784.6 հ/դրամ/:

Գույքահարկի տարեկան գումարը 2011թ. համար կազմել է 457.1 հ/դրամ, որին ավելացվել է 110.5 հ/դրամ ապառքը և պլան սահմանվել է 567.6 հ/դրամ: 160 միավոր փոխադրամիջոցներից 51-ի գույքահարկերը <<սառեցվել են>> իրականում դրանք օտարված լինելու կամ ֆիզիկապես մաշված լինելու պատճառով: Համենայն դեպս,

առ 1.04.2011թ. դրությամբ ապառքների այդ հարկատեսակի գծով կազմել են 1061.0 հ/դրամ, որից տույժեր 242.4 հ/դրամ:

Համայնքում գործող 3 սննդի օբյեկտների համար, ավագանու որոշմամբ, սահմանվել են 60.0 հ/դրամ տեղական տույժեր, որոնք ժամանակին չեն գանձվում և վերածվում են ապառքների, տեղիք տրվում տույժերի հաշվառման:

Համայնքում 2009-2011թթ. նախատեսվել և պահվել են 14 հաստիքային միավորներ, որոնց համար ամսական նախատեսվել են 36-ից 58.0 հ/դրամ աշխատավարձեր /2011թ. գյուղապետի դրույքաչափը 130.0 հ/դրամ է 20% բարձր լեռնայինով/:

Հայտարարվեց՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սեփական եկամուտների գանձումները համապատասխանորեն ապահովելու, ապառքներ կրճատելու, միջոցները արդյունավետ ծախսելու, գնումները սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:

Հանձնարարվեց հաշվապահությանը՝ հաշվապահական հաշվառումը իրականացնել սահմանված կարգով, կիրառել սկզբնական փաստաթղթերի տվյալների հավաքագրման, գրանցման և ընդհանրացման համակարգը, բացել համապատասխան հաշվապահական հաշիվներ, կազմել շրջանառության տեղեկագրեր, վարել գլխավոր գիրք, սկզբնական փաստաթղթերում լրացնել պարտադիր ռեկվիզիտները:

Ե Ր Ր Ա Կ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն







Առաջարկել մարզի Մադինա համայնքի ղեկավարին՝

1. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը, այսուհետ իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով և ժամկետայնությամբ համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 41-րդ հոդվածների դրույթներին.
2. իրավական ակտերում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրականացնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով.
3. նորմատիվ իրավական ակտերը գործողության մեջ դնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով պետական իրավական գրանցում ստանալուց հետո.
4. մշակել, հաստատել և պետական գրանցման ենթարկելուց հետո գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.
5. համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրել ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ մրցութային եղանակով.
6. համայնքային սեփականության հողատեսքերը վարձակալության տրամադրել ՀՀ Հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան.
7. միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների, գանձումները ապահովելու, ապառքները կրճատելու ուղղությամբ.

8. հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Առաջարկություն - տեղեկանքը քննարկել մարզպետի նիստում, նախապատրաստել մարզպետի որոշման նախագիծ և առաջարկել տեղական ինքնակառավարման մարմիններին քննարկելու տեղեկանքը և միջոցներ ձեռնարկել տեղ գտած թերությունների վերացման ուղղությամբ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝

 Ի. ԱՍԱՏՐՅԱՆ
 ՅՈՒ. ԹԱԹԱՐՅԱՆ
 Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
 Հ. ՕՀԱՆՅԱՆ
 Վ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ
 Վ. ՊՈՂՈՍՅԱՆ